



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱԿԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

< 24 > հուլիսի 2015 թ.
ք.Գավառ

N 390-Ա

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի <Դ> կետով և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի <<Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին>> N17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 64-3.2-18/ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 22-ի թիվ 5 որոշումը, եզրակացությունը և Գրիգոր Գրիգորյանի դիմումը՝
հրամայում եմ՝

1. Գրիգոր Գրիգորյանին 2015 թվականի հուլիսի 24-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 64-3.2-18/ պաշտոնում:

Աշխատավարձը՝ <<Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2015թվականի հուլիսի 24-ից:

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ